Իմ եարն ի քենէ կ’ուզեմ, զայս հայիլս այլ է՞ր չիհաշուիս (?).
Եկեր է մահուան օրիկս, որ սապապըն դու չիլինիս:

Գ.

Իմ եա՛ր, թէ ի վեր հայիմ թէ ի վայր, քան ըզքեզ չըկայ.
Ամենն աստեղաց նըման, դուն ի մէջ պայծառ լուսընկայ.
Կաղանդն շնորհաւոր կ’ասեն, ի տարին մէկ օր մի կուգայ.
Այսօր ինձ հազար կաղանդ՝ աչերուս, որ ըզքեզ տեսայ:

Դ.

Նայե՛ց ի վերայ քարին, լուկ զքարամն ի քեզնէ արա՛.
Քան զքարն այլ ամուր չկայ, նա ջըրին ճամբեկ նա կուտայ.
Ջաղցին քարն է հարիւր լիտր, ’ւ ի ջըրին ահէն կու դողայ.
Իմ սիրտս է պատառ մի միս, քո սիրոյդ, ա՛մ, ո՞նց դիմանայ:

Ե.

Այսօր նոր արեւ ծագեց աչերուս՝ որ ըքեզ տեսայ.
Դեռ յորդորեցաւ սըրտիկս՝ որ բերնովս ի քեզ խօսեցայ.
Ձեր տունն ի բանէ եկի, զքեզ տեսայ՝ բանըս մոռացայ:
Ոտկունքս ո՛չ ի յետ կ’երթայ ո՛չ յառաջ, սարկարտան եղայ:

Զ.

Տարին տասներկու ամիս կու հոտէր խընծորն ի գօտիս.
Ո՛չ գեղ ո՛չ քաղաք թողի, մէկ մի դեղ չասացլ խընծորին:
Աղջիկ մի վերի թաղէն նա կանչեց թ’Արե՛կ մօտ ի յիս.
Առնեմ զքեզ ի ծոցս ի քուն, որ չերթաս ղարիպ մեռանիս:

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՂԱՇԱՐՔ

Ա.

Ծառայ այն ճակտին լինիմ՝ մարգարտէ քըրտինք կու ցօղայ.
Ասցի թէ պագիկ մ’առնում, նայ տեղիկն է խիստ ղալապայ:

Բ.

Իմ եարն երկու դուռ ունէր, մէկըն գաղտ ու մէկն ալանի.
Նըստէր ի գաղտուկ դըռնակն, կու կանչէր հայրէն ղազալի:

Գ.

Ով ըսպիտակ ծոց ունի, թող լըրջուկ շապիկ չիհագնի.